

Դասընթացի անվանումը՝	«Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները»
Տևողությունը՝	16 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

Դասընթացը նախատեսված է վարչական դատարանի, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:

Դասընթացն անդրադառնում է ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունների քննարկմանն ու վերլուծությանը: Դասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերը:
- Վարչական դատարան դիմելու իրավունքը:
- Ընտրական գործի ընդդատությունը և դատարանի կազմը:
- Վարչական դատարան դիմելը և հայցադիմումը քննելու ժամկետները:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ բնույթ ունեցող որոշումները վիճարկելու վերաբերյալ դիմումների քննությունը:
- Ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերի քննությունը:

*Դասընթացը վարում է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի
նախագահ Հովսեփ Բեդկյանը:*